ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

26.11.2019թ.

Արձանագրություն թիվ 3

1. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 2019թ. հոկտեմբերի 19-ին հայտարարված մրցույթի վերաբերյալ.

1.1. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Արմենակ Ջալլադի Տեր-Գրիգորյանն ընտրված է ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

1.2. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Արևիկ Յուրիի Աբովյանն ընտրված է Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

1.3. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Վարդան Սամվելի Ալեքսանյանն ընտրված է ՀԱԱՀ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.4. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Գագիկ Ազատի Թովմասյանն ընտրված է ՀԱԱՀ Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.5. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Լուսինե Ռոմիկի Հարությունյանն ընտրված է ՀԱԱՀ Ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.6. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Ամալյա Մկրտչի Գալստյանն ընտրված է ՀԱԱՀ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնում:

1.7. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Սիրանուշ Հարությունի Ալթունյանն ընտրված է ՀԱԱՀ Անասնաբուժական սանիտարական փորձաքննության, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի հայցորդ Տաթևիկ Արթուրի Ջհանգիրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրում փոփոխություն կատարելու և ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցի վերաբերյալ.

2.1. Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի հայցորդ Տաթևիկ Արթուրի Ջհանգիրյանի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Դրմբոնի և Վարդաձորի մետաղահանքային արդյունաբերության ազդեցության գնահատումը հող-ջուր-բույս համակարգում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ «Արցախի Հանրապետության Դրմբոնի և Կաշենի մետաղահանքային արդյունաբերության ազդեցության գնահատումը հող-ջուր-բույս համակարգում», Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

2.2. Տաթևիկ Արթուրի Ջհանգիրյանի «Արցախի Հանրապետության Դրմբոնի և Կաշենի մետաղահանքային արդյունաբերության ազդեցության գնահատումը հող-ջուր-բույս համակարգում» վերնագրով՝ Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

3. ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնում Սամվել Սիմոնի Ասատրյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

3.1. Սամվել Սիմոնի Ասատրյանին ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնում:

3.2. Հաստատել Սամվել Սիմոնի Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեման «Պտղատուների վնասակար ակարիֆաունան և պայքարի միջոցառումներն Արմավիրի մարզի պայմաններում» վերնագրով՝ Զ.01.02 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

3.3. Գիտական ղեկավար հաստատել գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Լևոնի Թերլեմեզյանին:

4. ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնում Մարգարիտ Հակոբի Ղազարյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի.

4.1. Մարգարիտ Հակոբի Ղազարյանին ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնում:

4.2. Հաստատել Մարգարիտ Հակոբի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման «Տաքդեղի վնասատուները և պայքարի միջոցառումներն առավել վտանգավորների դեմ Արմավիրի մարզի պայմաններում» վերնագրով՝ Զ.01.02 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

4.3. Գիտական ղեկավար հաստատել գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Լևոնի Թերլեմեզյանին:

5. Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի հայցորդ Միքայել Սողոմոնյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխության հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության հայցորդ Միքայել Սողոմոնյանի «Բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեման թողնել անփոփոխ, իսկ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Հ. Ղազարյանի փոխարեն գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրաչյա Սերգեյի Ծպնեցյանին:

6. ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրարային էկոնոմիկայի ամբիոնում Արմեն Վարդանի Փահլևունուն որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

6.1. Արմեն Վարդանի Փահլևունուն ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրարային էկոնոմիկայի ամբիոնում:

6.2. Հաստատել Արմեն Վարդանի Փահլևունու թեկնածուական ատենախոսության թեման «Գյուղական տարածքների սոցիալտնտեսական զարգացման հիմնահարցերը ՀՀ Գեղարքունիքի մարզում» վերնագրով՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսա¬գիտություն և կառավարում» մասնագիտությամբ, տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

6.3. Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Հարություն Հարությունյանին:

7. ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ավետիք Արմենի Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսության մասնագիտության փոփոխության հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները համայնքների խոշորացման պայմաններում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը հաստատել Զ.01.01 «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ, տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար՝ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Մ. Եղիազարյան:

8. «ՀԱԱՀ ստորաբաժանումների ինքնավերլուծությունների իրականացման եվ գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման եվ բարելավման կարգ»-ի, ինչպես նաև «ՀԱԱՀ Որակի գնահատման և ապահովման կենտրոնի կանոնակարգ»-ի հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել «ՀԱԱՀ ստորաբաժանումների ինքնավերլուծությունների իրականացման եվ գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման եվ բարելավման կարգ»-ը և «ՀԱԱՀ Որակի գնահատման և ապահովման կենտրոնի կանոնակարգ»-ը:

9. նախորդ ուսումնական տարիների ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանության համար սահմանվող գումարի վերաբերյալ.

Նախորդ ուսումնական տարիների ընթացքում ավարտական աշխատանքի (դիպլոմային աշխատանք/նախագիծ, մագիստրոսական թեզ) պաշտպանությանը չթույլատրված, չներկայացած կամ անբավարար գնահատականներ ստացած ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանության համար 2019-2020 ուս. տարում սահմանել 40.0 հազար դրամ, իսկ 2020-2021 ուս. տարվանից սկսած՝ կրեդիտի արժեքին համապատասխան:

10. **Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից (ՄՄՈՒՀ) ՀԱԱՀ հեռակա ուսուցման դեպարտամենտ ուսանողների տեղափոխման կանոնակարգում փոփոխություն կատարելու հարցի վերաբերյալ.**

Սահմանել, որ ՄՄՈՒՀ-ի բարձր առաջադիմություն (լավ և/կամ գերազանց) ցուցաբերած շրջանավարտները համապատասխան մասնագիտությամբ կրթությունը սահմանված կարգով ՀԱԱՀ-ում (հեռակա ուսուցման դեպարտամենտի երկրորդ կուրս) շարունակելու դեպքում ազատվում են ՄՄՈՒՀ-ում ուսումնառած առարկաները ՀԱԱՀ-ում ուսումնառելուց (պայմանով, որ տվյալ առարկայի առարկայական տարբերությունը չի գերազանցում 1/3-ը, այսինքն՝ հավակնորդն ուսումնասիրել է տվյալ առարկայի առնվազն 2/3-ը), ինչպես նաև տվյալ առարկայի կրեդիտով արտահայտված ուսման վարձի վճարից:

ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ